ման ժամանակ օջախի համար գործ էր ածվում ծուխ բառը, որը նույնպես կրակի հետ կապված բառ է՝ գյուղում այսքան ծուխ կա, քահանան այսքան ծուխ ունի։ Մի քանի սերունդ ընդգրկող բազմանդամ գերդաստանի և մի զույգից և նրանց երեխաներից բաղկացած ընտանիքի համար զանգեզուրցին ունի միևնույն բառը։ Սա մի ապացույց է, որ թե՛ մեկ և թե՛ մյուս արյունակցական խմբավորումը մի տեղ էր պատրաստում իր կերակուրը և ապրում էր ընդհանուր տնտեսությամբ։ Այս աշխատության մեջ առաջինը երկրորդից տարբերելու համար դիմում եմ մեր գիտական գրականության մեջ արդեն վաղուց գործածվող գերդաստան բառին՝ երբ ընտանեկան խմբավորումն ընդգրկում էր մի քանի սերունդ իրար հետ անբաժան տնտեսությամբ ապրողներին։ Մի քանի արյունակից թեև ոչ միասին և մեկ տնտեսությամբ ապրող ընտանիքների և գերդաստանների ամբողջությունը զանգեզուրցին անվանում է ազկ կամ ցրէղ, ցրղ։ Այդտեղ տոհմ բառը բոլորովին ծանոթ չէ։ Ազգական՝ ասկական են նույն ազկին, ասկին, ազգին կամ նույն ցրէղին պատկանող մարդիկ։ Թեև երբեմն ասկականը կոչվում է բարէկամ, բայց բարէկամը[4] կարող է լինել և ոչ արյունակիցը։

ՀԱՐՍԱՆԵԿԱՆ ՍՈՎՈՐՈՒԹՅՈՒՆՆԵՐ

Այն բոլոր ծիսական արարողությունները և ձևերը[5], որոնցով ապահովվում էր տղամարդու և կնոջ սեռական կապի հարատև կայունությունն ու ամրությունը, նոր սերունդ առաջացնելու նպատակը, որպես և այլ հայաբնակ վայրերում կրում են հրսանիք, հարսանիք անունը։ Այդ ծիսակատարությունները ունեն իրենց նախապատրաստական և հիմնական մոմենտները։ Նախապատրաստական սովորությունները շաղկապված են նախ տղայի համար նշանացու ընտրելու հետ։ Զանգեզուրումն էլ, ինչպես հայաբնակ այլ գավառներում, ամուսնական նոր զույգ կազմելու նախաձեռնությունը բխում էր տղայի ծնողների կողմից։ Ամուսնացնում էին շատ մատաղ հասակում. աղջիկը լինում էր մոտավորապես 10—12 տարեկան, իսկ տղան՝ 14—15 տարեկան, իսկ նշանդրությունը հաճախ տեղի էր ունենում ավելի վաղ։ Այստեղ էլ երբեմն երկու ընտանիքներ, որոնք շտապում էին իրար հետ բարեկամություն հաստատել, աղջկան նշանում էին արդեն ուրորուցում՝ խազելով ուրորուցը[6], աղջկա կրծքից մի արծաթե դրամ կախելով[7]։ Ուրորուցը խազելով նշանդրությանը դիմում էին մանավանդ այն դեպքերում, երբ նշանվողներից մեկի ընտանիքում երեխաները չէին ապրում և ծնողները ցանկանում էին, որ մյուս ընտանիքից, որտեղ երեխաները կենդանի էին մնում, բախտի հովանավորությունն անցնի նաև իրենց ընտանիքին։

Աղջկա տերը տղայի տիրոջ առաջարկությունն ընդունելուց առաջ խորհրդակցում էր իր ազգականների հետ։ Կարևոր նշանակություն էր տրվում

---

[4] Պարէկա՛մ՝ Մեղրու բարբառով։

[5] Այս սովորությունների մանրամասն նկարագրությունը տես՝ Լալայեան Ե., Զանգեզուր գավառը աշխատության հ. I, Սիսիան, էջ 108—127 և հ. II, Զանգեզուր, էջ 66—84, ինչպես և ավելի առաջ լույս տեսած՝ Мелик-Шахназаров Е., Свадьбы зангезурских армян, СМОМПК, вып. XIX, отд. 11, էջ 220—226.

[6] Կապանի շրջան։

[7] Լալայեան Ե., Զանգեզուր, էջ 70։